Հուսիկ Արա

Որ չավարտվես

Ամեն անգամ քեզ սիրում եմ նորից,
բոլոր ժամերի մեջ մի քիչ ավելի.
քեզ սիրում եմ դանդաղ ու քիչ-քիչ,
որ չավարտվես:

Օդ ես, ջուր ես, հող ես ու կրակ.
ինչպե՞ս չափվի տարերքիդ հետ
մենակ սերս՝ կես գոյություն:
Շունչս կտրվում է թոքերիս մեջ հատված-հատված,
խուճապ եմ, փախուստ ու տագնապ.
քանդուքարափ է արել կիրքդ ինչ իմն էր իմ շուրջ:
Կյանքը ինձնից դուրս ու քո մեջ է,
քեզ բերող ամեն քայլ ինձ հեռացնում է ինձնից.
ես չեմ շտապում,
քո հեռուն ամենամոտն է ինձ:

Առավոտի սուրճի նման
քեզ հաճելի է, թե ինչպես եմ սիրում ես,
բայց ոչ այնքան, որ առանց ինձ կմեռնես.
իսկ ես սիրում եմ դանդաղ ու քիչ-քիչ
և ապրում ամեն օր: